ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 92-Ն

ք.Իջևան, Երևանյան 5, Հեռ. (0263)32138

30 մարտի 2011թ.

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ, ՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՈՒ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու 17.04.2006թ /արձ թիվ 3/ որոշումով Իջևան քաղաքի Երևանյան, և Աբովյան փողոցներում հասարակական կառուցապատման նպատակով առանձնացվել են հողամասեր:

Անհրաժեշտություն է առաջացել հասարակական կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերին տալ հասցեավորում և փոխել հողամասերի գործառնական նշանակությունը: Համաձայն ՀՀ Կառավարության 06.10.2005թ. թիվ 2417-Ն որոշման, նշված հողամասերը համայնքին են փոխանցվել որպես բնակավայրերի նպատակային և այլ հողեր գործառնական նշանակության հողամասեր:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդի ներկայացվող Երևանյան փողոցում գտնվող 19քմ մակերեսով հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, ք. Իջևան, Երևանյան փողոց, թիվ 164/1:
2. Մրցույթի ներկայացվող Աբովյան փողոցում գտնվող 150քմ մակերեսով հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, ք. Իջևան, Աբովյան փողոց, թիվ 3/1:
3. Աճուրդի ներկայացվող Երևանյան փողոցի թիվ 164/1 հասցեում գտնվող 19քմ մակերեսով հողամասը հանել բնակավայրերի այլ հողերի գործառնական նշանակության հողամասերի շարքից և դասել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի շարքը:
4. Աճուրդի ներկայացվող Աբովյան փողոցի թիվ 3/1 հասցեում գտնվող 150քմ մակերեսով հողամասը հանել բնակավայրերի այլ հողերի գործառնական նշանակության հողամասերի շարքից և դասել հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի շարքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ